# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 , darpas.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

N 295
*24 դեկտեմբեր 2018թ.*

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնումԴարպաս համայնքի ավագանու թիվ 33-ից 36 որոշումները իրենց հավելվածներով:
Առդիր՝ էլեկտրոնային ֆայլեր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  **Արմեն Ալոյան**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Դ. Վարդանյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետով, « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ ,14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս գյուղական համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

| | |
|---|---|
| Աբրահամյան | Լյուբա |
| Ալոյան | Նորայր |
| Ասլանյան | Արմեն |
| Դոդոյան | Կարեն |
| Կիրակոսյան | Կարեն |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դարպաս համայնքի ավագանու
2018 թ.դեկտեմբերի 18-ի թիվ 33 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 ( յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար ) դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 ( քսանհինգ հազար ) դրամ,

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 (քսանհինգ հազար ) դրամ,

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000՝ ( հիսուն հազար ) դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 (հազար հինգ հարյուր ) դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես շենքերի և շինությունների համար՝ 2500 ( երկու հազար հինգ հարյուր ) դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով,

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն` 1500 (հազար հինգ հարյուր ) դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը` շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվածքանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար`

2500 ( երկու հազար հինգ հարյուր ) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 60000 ( վաթսուն հազար ) դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 18000 ( տասնութ հազար ) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառքի իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար` 15000 (տասնհինգ հազար ) դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`

ա . ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում

1500 (հազար հինգ հարյուր ) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

3100 ( երեք հազար հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

4000 ( չորս հազար ) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

6500 (վեց հազար հինգ հարյուր ) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում

8000 ( ութ հազար ) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

14000 (տասնչորս հազար ) դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

1500 ( հազար հինգ հարյուր ) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

3100 ( երեք հազար հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

4000 ( չորս հազար ) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում

6500 ( վեց հազար հինգ հարյուր ) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

8000 (ութ հազար ) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

14000 (տասնչորս հազար ) դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 ( հարյուր հինգ ) դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և

բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 ( քսանհինգ հազար ) դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 ( երկու հարյուր հազար ) դրամ.

դ. խաղատների համար՝ 500000 ( հինգ հարյուր հազար ) դրամ,

գ. շահումով խաղերի համար՝ 250000 ( երկու հարյուր հիսուն հազար ) դրամ.

դ. վիճակախաղերի համար՝ 100000 (հարյուր հազար ) դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական, տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է

ա. հիմնական շինություններ ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 ( երկու հազար ) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000 ( երեք հազար ) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4500 ( չորս հազար հինգ հարյուր ) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 ( ութ հազար ) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 9000 ( ինը հազար ) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 (տասնհինգ հազար ) դրամ,

բ. ոչ հիմնական շինություններ ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 ( հազար ) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1500 ( հազար հինգ հարյուր ) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3500 (երեք հազար հինգ հարյուր ) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5500 (հինգ հազար հինգ հարյուր ) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 9500 ( ինը հազար հինգ հարյուր) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 11000 (տասնմեկ հազար ) դրամ:

11) ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտոնական գոտիներում տեղա-

դրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 (երկու հազար) դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո ) դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 100000 (հարյուր հազար ) դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 (երեք հազար ) դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 ( երկու միլիոն հինգ հարյուր հազար ) դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 ( հինգ միլիոն ) դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 ( յոթ միլիոն )դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 ( տասը միլիոն) դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ( հինգ հազար ) դրամ,

2. Հարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով շինարարության

թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքի կամ շինությունների (այդ թվում՝ նրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
15000 (տասնհինգ հազար) դրամ,

3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ( հինգ հազար ) դրամ,

4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի ( փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 ( երկու հազար ) դրամ,

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 4000 ( չորս հազար ) դրամ,

6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին ՝( վերնիսաժներին ) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ( հինգ հազար ) դրամ,

7. համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա. Կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և ( կամ ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 100 (հարյուր ) դրամ,

բ. Ուսումնական հաստատությունների աղբահանության վճար՝ յուրաքանչյուր աշակերտի համար ամսական 13 (տասներեք) դրամ ,

գ. Հասարակական սննդի կետերի, ռեստորանների աղբահանության վճար՝ 1 քառակուսի մետրի համար ամսական 103 (հարյուր երեք) դրամ,

դ. Խանութների աղբահանության վճար՝ 1 քառակուսի մետրի համար ամսական 40 (քառասուն ) դրամ,

ե.Արտադրական ձեռնարկությունների աղբահանության վճար՝ յուրաքանչյուր աշխատողի համար՝ ամսական 40 (քառասուն ) դրամ,

զ. Հանդիսությունների սրահների աղբահանության վճար՝ ՝ 1 քառակուսի մետրի համար ամսական 40 (քառասուն ) դրամ,

է. Ոչ կենցաղային և խոշոր եզրափակիչ աղբի համար՝ 1 խորանարդ մետրի համար 0 ( զրո ) դրամ ։

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի մեկ խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 %- ի չափով՝ 600 ( վեց հարյուր) դրամ,

9. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը սահմանել՝ 6000 (վեց հազար) դրամ,

10. համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ( երաժշտական խմբակի) ծառայություններից օգտվողների համար՝ հա-

մայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման գումարի չափը սահմանել՝
ա. Առաջին դասարանի համար՝ 1500 ( հազար հինգ հարյուր) դրամ,
բ. Երկրորդ և բարձր դասարանների համար՝ 2000 (երկու հազար) դրամ,
11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 0 ( զրո ) դրամ:
12.համայնքի տարածքում համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների դիմաց՝
ա. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության , ծննդօգնության համար՝ 500 ( հինգ հարյուր) դրամ,
բ. Թեթև միջամտության համար ՝ 1000 ( հազար) դրամ,
գ. Ծանր միջամտության համար՝ 5000 ( հինգ հազար) դրամ,
դ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կա այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից ( բացառությամբ՝ << Գյուղատնտեսական կենդանիների պատվաստոոում>> հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝
1.մանր կենդանիների համար՝ 100 ( հարյուր) դրամ,
2. Խոշոր կենդանիներ համար՝ 200 ( երկու հարյուր) դրամ,
ե. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ 200 ( երկու հարյուր) դրամ,
զ.Ախտահանության 1 քառակուսի մետրի համար՝ 200 ( երկու հարյուր) դրամ,
է. Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառակուսի մետրի համար՝ 100 ( հարյուր) դրամ,
ը. Կրծողների ոչնչացման (դեռատիզացիա ) 1 քառակուսի մետրի համար՝ 200 (երկու հարյուր) դրամ,
թ. Արհեստական սերմնավորման համար՝ 5000 ( հինգ հազար) դրամ,
ժ. Կենդանու հերձման համար՝
1. Մանր կենդանի – 1000 ( հազար) դրամ,
2. Խոշոր կենդանի - 3000 ( երեք հազար) դրամ,
ի. Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելության համար ՝ 1000 ( հազար) դրամ,
լ. Կենդանիների նախասպանդային զննման համար՝ կախված կենդանու տեսակից
1. Մանր կենդանի՝ 1000 ( հազար) դրամ,
2. Խոշոր կենդանի՝ 2000 (երկու հազար) դրամ,
խ. Կենդանիների հետսպանդային զննման համար ( մինչև 2018թ. հուլիս ամիսը)
1. Մանր կենդանի՝ 1000 ( հազար) դրամ,
2. Խոշոր կենդանի՝ 2000 ( երկու հազար) դրամ:

Համայնքի ղեկավար՝ /Ա.ԱԼՈՅԱՆ /

18 դեկտեմբերի 2018թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, «ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ԵՎ «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի11-րդ և 28-րդ կետերով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասով.

Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի «Կրթամարզամշակույթային համալիր» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4.Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 15-ի «ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Կրթամարզամշակույթային համալիրի» և «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 13 որոշման ՝ հավելված 1-ը, 2-ը, 3-ը:

Կողմ -4 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված 1
Դարպաս համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 34 որոշման

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ
## ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 9

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Քաղաքական պաշտոն զբաղեցնողներ | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 273000 |
| | | |
| Հայեցողական պաշտոն զբաղեցնողներ | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 182000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 181000 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 2 | 145000 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 144000 |
| Տեխ.սպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 72760 |
| Բանվոր | 1 | 72760 |
| Վարորդ | 1 | 82000 |
| Ընդամենը գյուղապետարան | 9 | 1297520 |

Դարպաս համայնքի
ղեկավար Ա.ԱԼՈՅԱՆ

Հավելված 3
Դարպաս համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 3[redacted] որոշման

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 10

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 137500 |
| Դաստիարակ | 2 | 119200 |
| Դաստիարակի օգնական | 2 | 72760 |
| Հաշվապահ | 1 | 72760 |
| Խոհարար | 1 | 72760 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 72760 |
| Տնտեսվար | 0.5 | 72760 |
| Բուժքույր | 0.5 | 72760 |
| Ընդամենը «ՆՈՒՀ» | 8.5 | 885220 |

Դարպաս համայնքի
ղեկավար ԱԼՈՅԱՆ

Ա.ԱԼՈՅԱՆ

Հավելված 2
Դարպաս համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 34 որոշման

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 6

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 100000 |
| Գրադարանավար | 1 | 72760 |
| Խմբավար դաշնամուրի | 1 | 72760 |
| Հաշվապահ | 0.82 | 72760 |
| Պահակ | 2 | 72760 |
| Ընդամենը «Կրթամարզամշակութային համալիր» | 5.82 | 463800 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 35-Ն

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի, 5-րդ կետով.

Դարպաս համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Դարպաս համայնքի 2019 թվականի բյուջեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴՈԴՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 36

## «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Դարպաս համայնքի «Նախադպրոցական ուսումնական հաստատության» ՀՈԱԿ-ի աշխատանքները ջեռուցման պատճառով 2019թ-ի հունվար ամսին ժամանակավոր դադարեցնել:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ

ԱԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴՈԴՈՅԱՆ ԿԱՐԵՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ